ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 65- 66 (16261) ՇԱԲԱԹ, 16 ՕԳՈՍՏՈՍԻ 2014 Թ. ԳԻՆԸ` 25 ԹԵՏՐԻ

ԷԿՈՆՈՄԻԿԱ

ԱՆՑԿԱՑՎԵՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու նախագահությամբ անցկացվեց տնտեսական խորհրդի նիստ:

Նիստի անդամները քննարկեցին էլեկտրոնային կառավարման զարգացմանն ուղղված իրականացվող եւ ծրագրված նախագծերը: Խորհրդի քարտուղար Ռոման Չխենկելին, վարչապետին տեղեկատվություն ներկայացրեց տրանսպորտային միջանցքի` ավիացիայի, երկաթուղու, ցամաքային, ծովային եւ խողովակաշարային, տրանսպորտի գործունեության վերաբերյալ: Տնտեսական խորհրդին ներկայացվեցին նաեւ թվային հաղորդագրության զարգացման ուղղությամբ իրականացված աշխատանքների արդյունքները: Այն խորհրդին զեկուցեց էկոնոմիկայի եւ կայուն զարգացման առաջին փոխնախարար Դմիտրի Քումսիաշվիլին:

ՏԱՐԵԼԻՑ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ՊԱՏՐԱՍՏ ԵՆՔ ՀԱՇՏՎԵԼ ԱԲԽԱԶՆԵՐԻ ՀԵՏ ԵՎ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ԱՄԵՆ ԻՆՉ ՍԿՍԵԼ ՄԱՔՈՒՐ ԷՋԻՑ»

Օգոստոսի 14-ին լրացավ Աբխազիայում ռազմական գործողություններն սկսելու 22-րդ տարեդարձը: Աբխազիայում ռազմական դիմակայությունը շարունակվեց 13 ամիս եւ 13 օր: Ավարտվեց 1993 թվականի սեպտեմբերի 27-ին` Սուխումիի անկմամբ եւ Վրաստանի ուժերի պարտությամբ: Դիմակայությանը, առանձին տվյալներով, վրացական կողմից զոհվեց շուրջ 10 հազար զինծառայող եւ խաղաղ քաղաքացի, 300 հազար փախստականներ մնացին անօթեւան:

Աբխազական դիմակայության 22-րդ տարեդարձի առթիվ, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին տարածեց հատուկ հայտարարություն: «Այսօր լրացավ Աբխազիայում պատերազմը սկսվելու 22-րդ տարին: Դա ամենաողբերգական օրն է Վրաստանի նորագույն

(Շարունակությունը` 2-րդ էջում)

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ ՕՐ

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԶՈՐԱՎԱՐԺԱՐԱՆՈՒՄ

Օգոստոսի 11-ին զինվորական բժիշկները նշեցին իրենց մասնագիտական տոնը:

Այդ կապակցությամբ Կրծանիսիի ռազմակայանում զինված ուժերի բժշկական դեպարտամենտի կազմակերպմամբ անցկացվեց «Բժշկական աջակցություն» զորավարժությունը: Զորավարժությանը պաշտպանության նախարարության բարձր պաշտոնյաների հետ միասին հետեւում էին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին եւ առողջապահության նախարար Դավիթ Սերգեյենկոն:

Զորավարժության գլխավոր նպատակն էր արտակարգ իրավիճակներում բարելավել բժշկական անձնակազմի համաձայնեցված գործունեությունն ու մասնագիտական հմտությունները: Զորավարժություններին մասնակցում էին բժշկական հատուկ գումարտակի վիրահատական եւ էվակուացիոն խմբերը, ցամաքային զորքերի արեւելյան հրամանատարության հրետանային բրիգադի զինբժիշկները, հատուկ գործողությունների զինծառայողները:

ԳՈՐԾԱԴԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԵՐԻ ՀԵՏ

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին աշխատանքային հանդիպում է ունեցել երկրի նահանգապետների հետ:

Հանդիպմանը քննարկվել է տարածաշրջաններում առկա իրավիճակի եւ տարածաշրջանային ընթացիկ նախագծերի հարցը: Նահանգապետերը վարչապետին տեղեկատվություն են փոխանցել զբոսաշրջության սեզոնի եւ գյուղի աջակցության պետական ծրագրի ընթացքի մասին:

Հանդիպմանը ներկա են եղել Վրաստանի նախարարների կաբինետի անդամներն ու տարածաշրջանների եւ ինքնակառավարման տեղական մարմինների հետ կապի կառավարության գրասենյակի դեպարտամենտի ղեկավար Ակակի Չխենկելին:

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ

ԱԳ ՆԱԽԱՐԱՐԸ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԵՑ ԱՄԲԱՍԱԴՈՐԻԱԼԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Վրաստանի արտաքին գործերի նախարար Մայա Փանջիկիձեն, հանրագումարելով ամբասադորիալ-2014-ի արդյունքները, հայտարարեց, որ ինքը գոհ է Վրաստանի դիվանագիտական առաքելությունների ղեկավարների հավաքի արդյունքներից:

Նշենք, որ ամբասադորիալին վրաց դիվանագետների հետ հանդիպում ունեցավ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին եւ վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին: «Մենք ավարտեցինք քառօրյա աշխատանքը: Գոհունակությամբ ցանկանում եմ նշել, որ այդ չորս օրերի ընթացքում Վրաստանի դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչները գործնական հնարավորություն ստացան հանդիպելու երկրի օրենսդիր եւ գործադիր իշխանության գրեթե բոլոր ներկայացուցիչների հետ»,- հայտարարեց Մայա Փանջիկիձեն:

ԵՌԱԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՍՈՉԻ. ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԵՎ ԻԼՀԱՄ ԱԼԻԵՎԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՎԼԱԴԻՄԻՐ ՊՈՒՏԻՆԻ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՄԲ

Օգոստոսի 10-ին Սոչիում տեղի է ունեցել Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի, Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի եռակողմ հանդիպումը:

Հանդիպմանը քննարկվել են Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման, ինչպես նաեւ վերջին օրերին Ադրբեջանի կողմից հրահրած լարման արդյունքում հայ-ադրբեջանական սահմանին եւ շփման գծում ստեղծված իրավիճակին առնչվող խնդիրները:

(Շարունակությունը` 7-րդ էջում)

ՏՈՆ

ՆՇՎԵՑ ԴԻԴԳՈՐԻԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆԸ

Օգոստոսի 12-ին Վրաստանում նշվեց Դիդգորիի տոնը: Վրաց թագավոր Դավիթ Շինարարի գլխավորությամբ 1121 թվականի օգոստոսի 12-ին, վրացական զորքերը Դիդգորիի ճակատամարտում պարտության մատնեցին թուրք սելջուկներին, ինչը եւ դարձավ բեկումնային իրադարձություն Վրաստանի տարածքային ամբողջականության վերականգնման գործում:

Այդ օրը տարիներ շարունակ նշվում է մեծ շուքով: Բացառություն չկազմեց նաեւ այս տարին: Հանդիսությանը ներկա էին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, պաշտպանության նախարար Իրակլի Ալասանիան: Վարչապետի նախաձեռ-

(Շարունակությունը` 2-րդ էջում)

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԿԿԱՌՈՒՑՎԻ 1000 ԱՇԱԿԵՐՏԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Վրաստանի գիտության եւ կրթության նախարարությունը ձեռնամուխ է եղել Թբիլիսիի թիվ 103 վրաց-հայկական հանրային դպրոցի նախկին շենքի ապամոնտաժման աշխատանքներին:

Ապամոնտաժման որոշումը նախարարությունն ընդունել էր Սամխարաուլու անվան փորձագետների բյուրոյի կողմից ընդունված եզրակացության հիման վրա: Հիշեցնենք, որ թիվ 103 հանրային դպրոցի աշակերտները նոր ուսումնական տարին ժամանակավորապես կշարունակեն թիվ 157 հանրային դպրոցում: Ապամոնտաժումից հետո թիվ 103 դպրոցի տարածքում կկառուցվի նոր, արդի չափորոշիչներին համապատասխան 1000 աշակերտի համար նախատեսված դպրոց:

Նախարարությունը Թբիլիսիի քաղաքապետարանի հետ վթարային վիճակում գտնվող շենքի հարցով անհրաժեշտ բոլոր միջոցառումներն իրականացրեց կարճ ժամանակահատվածում: Նոր դպրոցի շինարարության գործում նախարարությունն ակտիվորեն համագործակցում է քաղաքապետարանի հետ:

Օգոստոսի 15-ին Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Թամար Սանիկիձեն եւ Թբիլիսիի քաղաքապետ Դավիթ Նարմանիան եղան թիվ 103 դպրոցի տարածքում, հանդիպում ունեցան տեղի բնակիչների հետ եւ պատասխանեցին նրանց հետաքրքրող հարցերին:

ՏԱՐԵԼԻՑ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ՊԱՏՐԱՍՏ ԵՆՔ ՀԱՇՏՎԵԼ ԱԲԽԱԶՆԵՐԻ ՀԵՏ ԵՎ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ԱՄԵՆ ԻՆՉ ՍԿՍԵԼ ՄԱՔՈՒՐ ԷՋԻՑ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

պատմության մեջ: Այդ պատերազմը ծանր հարված հասցրեց մեր երկրին, Վրաստանի պետականությանը: Այդ հակամարտության արդյունքում, Վրաստանի ստացած վերքերը մինչեւ օրս չեն սպիացել: Այսօր կրկին մենք ցանկանում ենք հարգանքի տուրք մատուցել այդ պատերազմում զոհվածների հիշատակին: Ծանր են նաեւ նրանց համար, ովքեր ստիպված թողել են հարազատ տները եւ դարձել փախստականներ: Մենք հնարավոր ամեն ինչ կանենք, որպեսզի նրանց համար, մինչեւ հարազատ երկրամաս վերադառնալը, ստեղծենք բնակության նորմալ պայմաններ: Հարկ է նշել, որ մենք պատրաստ ենք հաշտվելու մեր աբխազ եղբայրների հետ եւ ցանկանում ենք ամեն ինչ սկսել մաքուր էջից: Համոզված եմ, մեր աբխազ եղբայրների հետ բարեկամության եւ վստահության վերականգնումը կհանգեցնի Վրաստանի միավորմանը»,- ասված է վարչապետի հայտարարության մեջ:

Աբխազական պատերազմի 22-րդ տարեդարձի առթիվ տարածած հայտարարության մեջ, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին նշել է. «Մեր երկրի համար այդ օրն առանձնակի ծանր է: 1992 թվականի օգոստոսի 14-ին Աբխազիայում սկսվեց եղբայրասպան պատերազմը: Ցավով եմ հիշում այդ օրերը, եւ ցավակցություն հայտնում բոլոր նրանց, ովքեր կորցրել են ընտանիքի անդամին, հարազատին, մերձավորին: Այս ծանր օրը կրկին անգամ ցանկանում եմ ընդգծել՝ մենք միասին կհաղթահարենք այդ պատերազմի ողբերգական հետեւանքները»:

ՏՈՆ

ՆՇՎԵԾ ԴԻԴԳՈՐԻԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նությամբ սահմանվել է «Դիդգորիի խաչ» շքանշանը, որով կպարգեւատրվեն աչքի ընկնող զինծառայողները: Վարչապետը վերոնշյալ առաջին շքանշանը հանձնեց 2008 թվականի օգոստոսյան պատերազմի մասնակից, չորրորդ բրիգադի 43-րդ գումարտակի հրամանատար Վիտալի Ցխադաձեին: Ընդունված որոշման համաձայն, վերոնշյալ շքանշանը կտրվի ամեն տարի օգոստոսի 12-ին «Դիդգորոբայի» տոնին՝ տարվա ընթացքում իրենց դրական դրսեւորած զինծառայողներին:

Տոնի առթիվ պատվոգրեր հանձնվեցին «Վազիանի 2014» զորավարժություններում աչքի ընկած զինծառայողներին:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

Ի.ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՊԱՏՐԱՍՏ ԵՄ ԲԱՆՏ ԳՆԱԼ, ԵԹԵ ԽԱԽՏԵՄ ՕՐԵՆՔԸ...»

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին ամերիկացի սենատորներին հղած պատասխան նամակում, որոնք անհանգստություն են հայտնել Վրաստանի նախկին իշխանությունների բարձրաստիճան ներկայացուցիչների դեմ աղմկահարույց դատական գործերի առնչությամբ, քաղաքական գործիչներին առաջարկել է ժամանել Վրաստան եւ անձամբ համոզվել այն բանում, որ այդ դատավարությունները թափանցիկ են ու անաչառ:

Վրացական «Տաբուլա» հանդեսն օգոստոսի 7-ին հրապարակել է Ղարիբաշվիլուն հասցեագրված նամակը ամերիկացի սենատորներ Ջոն Մակքեյնի, Ջին Շահինի, Ջիմ Ռիշի եւ Մարկո Ռուբիոյի անունից, որտեղ նրանք անհանգստություն են հայտնում Վրաստանում տեղի ունեցող վերջին իրադարձությունների առնչությամբ: Ղարիբաշվիլին ընդգծել է, որ ինքը «պատրաստ է բանտ գնալու», եթե երբեւիցե խախտի օրենքի պարտականությունները կատարելիս: Օգոստոսի լույս 2-ի գիշերը Թբիլիսիի քաղաքային դատարանը Սաակաշվիլու համար հեռակա ընտրել է նախնական կալանքը որպես խափանման միջոց հետաքննության ժամանակ:

ԴԱՏԱԿԱՆ

ՍԱԱԿԱՇՎԻԼՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ Է ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԱՏՆՄԱՆ ՄԵՂԱԴՐԱՆՔ

Ինչպես արդեն հաղորդել ենք, օգոստոսի 5-ին Վրաստանի գլխավոր դատախազությունը Վրաստանի նախկին նախագահ Սաակաշվիլուն եւ եւս չորս նախկին պետական պաշտոնյաներ՝ վարչապետ Վանո Մերաբիշվիլուն, արդարադատության նախարար Զուրաբ Ադեիշվիլուն, պաշտպանության նախարար Դավիթ Կեզերաշվիլուն եւ Թբիլիսիի քաղաքապետ Գիգի Ուգուլավային 2007 թվականի նոյեմբերի 7-ի ակցիայի ցրման, «Իմեդի» հեռուստաընկերության ավերման եւ այժմ հանգուցյալ Բադրի Պատարկացիշվիլու ունեցվածքի ապօրինի զավթման գործով մեղադրանքներ էր ներկայացրել: Նրանց մեղադրում են պաշտոնեական լիազորությունների վերազանցման մեջ, Վրաստանի Քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածը նախատեսում է մինչեւ 8 տարի ժամկետով ազատազրկում:

Միխեիլ Սաակաշվիլին մեղադրվում է նաեւ պաշտոնեական լիազորությունների վերազանցման մեջ 2005 թվականի ամռանը Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Վալերի Գելաշվիլուն ծեծելու գործով:

Օգոստոսի 14-ին Վրաստանի գլխավոր դատախազությունը եւս մեկ մեղադրանք է առաջադրել նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլուն, այս անգամ նա մեղադրվում է բյուջետային միջոցների վատնման մեջ:

Խոսքը վերաբերում է Սաակաշվիլու հանձնարարությամբ Վրաստանի պետական պահպանության հատուկ ծառայության ավելի քան 8,8 միլիոն լարիի վատնմանը: Դատախազությունը պնդում է, որ այդ փողը ծախսվել է խոհարարի, մերսորդուհու ծառայությունների, այն հյուրանոցների համար, որտեղ բնակվել են օտարերկրացի հյուրեր, Իտալիայում զբոսանավի վարձակալման եւ այլ նպատակներով:

Հանցանքի հաստատման դեպքում Սաակաշվիլուն սպառնում է 7-ից մինչեւ 11 տարվա ազատազրկում:

Վրաստանի նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլու նկատմամբ ներքին հետախուզում է հայտարարվել: Վրաստանի գլխավոր դատախազությունը Սաակաշվիլու հետախուզման հայտարարությունն արդեն փոխանցել է Ներքին գործերի նախարարությանը: Սաակաշվիլին կձերբակալվի այն պահին, երբ մուտք գործի Վրաստանի տարածք:

Հիշեցնենք, որ ավելի վաղ դատարանը Միխեիլ Սաակաշվիլուն հեռակա կարգով ձերբակալելու որոշում է կայացրել՝ նրան ներկայացված մեղադրանքների հետ կապված:

ՆՈՐ ՕԲՅԵԿՏ

ՌԱԶՄԱԿԱՅԱՆԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ

Ախալքալաքիում սկսվել է նախնական ռազմական նախապատրաստության կենտրոնի շինարարությունը: Նոր օբյեկտի հիմնաքարի տեղադրման արարողությանը մասնակցեցին Վրաստանի պաշտպանության նախարար Իրակլի Ալասանիան, զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ-մայոր Վախտանգ Կապանաձեն:

Ներկա դրությամբ, իրականացվում է օբյեկտի ճաշարանի եւ շտաբի շինարարությունը: Աշխատանքները տարվելու են երկու փուլով: Առաջինը ավարտվելու է 2015 թվականի վերջին եւ նախատեսում է շտաբի, ճաշարանի եւ զորանոցի շենքերի կառուցում: Երկրորդ փուլը կավարտվի 2019 թվականին, որի ընթացքում շահագործման կհանձնվեն մարզական համալիրը, սերժանտների եւ սպաների հանրակացարանը, մանկապարտեզը եւ այլ կառույցներ:

Վերոնշյալ օբյեկտում, նախնական ռազմական նախապատրաստություն կանցնեն զորակոչիկները, որից հետո կբախշեն տարբեր զորամիավորումներում:

ԶՐԱՀԱՏԱՆԿԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԱԽԱԼՑԻԽԵՈՒՄ

Զրահատանկային զորքերի օրվա կապակցությամբ, Վրաստանի պաշտպանության նախարար Իրակլի Ալասանիան, գլխավոր շտաբի պետ, գեներալ-մայոր Վախտանգ Կապանաձեն Ախալցիխեում մասնակցեցին զրահատանկային ուսուցման կենտրոնի բացման արարողությանը:

Կենտրոնը կոչվեց 2008 թվականի օգոստոսյան պատերազմում հերոսաբար զոհված լեյտենանտ Շոթա Խուրցիձեի անունով: Պաշտպանության նախարար Իրակլի Ալասանիան« Շոթա Խուրցիձեի ընտանիքի անդամների ներկայությամբ, բացեց հերոսին նվիրված հուշատախտակը: Արարողությանը նախարարը նվերներ եւ պատվոգրեր հանձնեց աչքի ընկած զինծառայողներին:



ԹՈՒՐՔԻԱ

ԷՐԴՈՂԱՆԸ ՀԱՂԹԵՑ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Թուրքիայի 12-րդ նախագահ է ընտրվել «Արդարություն եւ զարգացում» կուսակցության առաջնորդ, Թուրքիայի ներկայիս վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը: Էրդողանը հավաքել է ընտրողների ձայների 53,05 տոկոսը: Նրա մրցակիցները՝ ընդդիմադիր Հանրապետական ժողովրդական եւ «Ազգայնական շարժում» կուսակցությունների առաջադրած միասնական թեկնածու էքմելեդդին Իհսանօղլուն եւ ժողովուրդների դեմոկրատական կուսակցության կողմից առաջադրված Սելահաթթին Դեմիրթաշը հավաքել են համապատասխանաբար 37,81 եւ 9,14 տոկոս ձայներ: Նշենք, որ Թուրքիայում առաջին անգամ անցկացվեցին համաժողովրդական նախագահական ընտրություններ: Մինչ այդ նախագահին ընտրում էր խորհրդարանը: Թուրքիայի նորընտիր նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը երկրում «հասարակական հաշտեցման նոր դարաշրջան» է խոստացել: Նա հայտարարել է նաեւ, որ ծրագրում է ընդլայնել երկրի նախագահի լիազորությունները:

ԱՄՆ

ՎԻԶԱՆԵՐԻ ՀԱՐՑԸ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՒՄ Է

ԱՄՆ դեսպանատունը տեղեկացնում է, որ տեխնիկական խնդիրների պատճառով մուտքի արտոնագրերի թողարկման հետ կապված կուտակումներն արդեն մեծապես կարգավորված են: «Աշխատանքներ են տարվում համակարգի լիարժեք գործունեության վերականգնման ուղղությամբ»,- նշվում է պետքարտուղարության տարածած հաղորդագրությունում: Շարունակվում է առաջնայնություն տալ ներգաղթային արտոնագրերին, որդեգրման գործերին եւ անհետաձգելի ուղեւորությունների համար պահանջվող ոչ ներգաղթային արտոնագրերին: Այս գործերով ու մնացած բոլոր գործերով արտոնագրերը տպագրվում են, ուշացումներ հազվադեպ են լինում: Հիշեցնենք, որ հուլիսի 31-ից ԱՄՆ-ը դադարեցրել էր վիզաների տրամադրումը ողջ աշխարհում՝ ԱՄՆ պետքարտուղարության հյուպատոսական հարցերով բյուրոյի անձնագրային եւ վիզաների համակարգի տեխնիկական խնդիրների պատճառով: Խնդիրը գլոբալ էր եւ հատուկ չէր որեւէ երկրի կամ մուտքի արտոնագրի տեսակի:

ԲՐԱԶԻԼԻԱ

ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒՆ ՁՈՀՎԵՑ ԱՎԻԱՎԹԱՐՈՒՄ

Բրազիլական Սան-Պաուլու նահանգում վթարի է ենթարկվել մասնավոր ինքնաթիռ, որում եղել է նաեւ Բրազիլիայի նախագահի թեկնածու էդուարդու Կամպուսը: Վթարի արդյունքում 49-ամյա քաղաքական գործիչը զոհվել է: Cessna 560XL ինքնաթիռը, որը դուրս է եկել Ռիո դե Ժանեյրոյից, Գուարուլյոս օդանավակայանում վայրէջք կատարելիս ընկել է բնակելի թաղամասի վրա: Էդուարդու Կամպուսն ավելի վաղ գլխավորում էր Պերնամբուկու նահանգը, եւ պատրաստվում էր իր թեկնածությունն առաջադրել նախագահական ընտրություններում Բրազիլական սոցիալիստական կուսակցության կողմից: Ընտրությունները պետք է անցկացվեն այս տարվա հոկտեմբերին:

ՈՒԿՐԱԻՆԱ

ՁՈՀԵՐԻ ԹԻՎԸ ԱՃՈՒՄ Է

Ուկրաինայի արեւելքում հատուկ գործողության իրականացման ժամանակ զոհվել է 568 ուժային, եւս 2120 զինվորական վիրավորվել է, հաղորդել է Ուկրաինայի Ազգային անվտանգության խորհրդի խոսնակ Անդրեյ Լիսենկոն: «Հակահաբեկչական գործողության իրականացման սկզբից ի վեր օգոստոսի 11-ի դրությամբ զոհվածների ընդհանուր քանակը կազմում է 568, եւս 2120-ը վիրավորվել է»,- ասել է Լիսենկոն: Անցած օրը հատուկ գործողության գոտում զոհվել է վեց զինվորական, 24-ը վիրավորվել է, հաղորդել է ՌԻԱ «Նովոսին»:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ԹԲԻԼԻՍԻԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՔԱՂԱՔԱՊԵՏԸ ՀԱՆԴԻՊԵՑ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Օգոստոսի 11-ին Թբիլիսիի նորընտիր քաղաքապետ Դավիթ Նարմանիան քաղաքապետարանում անցկացրեց քաղաքացիների ընդունելություն: Ընդունելության էր գրանցվել մի քանի հազար քաղաքացի, ինչը որոշակի խառնաշփոթության պատճառ դարձավ ընդունելության ընթացքում:

Ինչպես նշեց քաղաքապետի տեղակալ Նինո Խատիսկացին, այսուհետեւ քաղաքապետի մոտ ընդունելությունն իրականացվելու է շատ ավելի կազմակերպված:

Բնակիչներին նախօրոք կտրվի գրանցմամբ՝ Թբիլիսիի քաղաքապետի, տեղակալների, քաղաքապետարանի առանձին ծառայությունների ղեկավարների հետ հանդիպելու հնարավորություն:

Նշենք, որ, մինչ այդ, նոր քաղաքապետը հայտարարել է, որ պատրաստ է ցանկացած հարցով ընդունելու քաղաքացիներին եւ, ըստ հնարավորության, կարգավորելու ծագած հարցերը:

Քաղաքացիներին հուզող հարցերից մեկը առնչվում էր անվճար ճաշարանների ծրագրին: Ըստ Դավիթ Նարմանիայի, ինքը քաղաքի ղեկավարության նիստում շրջանների վարչությունների ու համապատասխան ծառայությունների ղեկավարներին հանձնարարել է այդ ուղղությամբ անցկացնել համապատասխան մոնիթորինգ: «Նրանք կներկայացնեն համապատասխան տեղեկատվությունը: Իսկ ինչ վերաբերում է ծրագրին, ապա այն անպայման կշարունակվի: Մարդկանց կողմից ստացվել են մեծ քանակությամբ դիմումներ, եւ այն մենք պետք է բավարարենք»,- հայտարարեց քաղաքապետը:

ՈԼՈՐՏ

ԱԳՐՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԱՋԴԱԿ Է ՍՏԱՆՈՒՄ

Պետությունն ակտիվացնում է ագրոապահովագրությունը եւ գյուղատնտեսության ոլորտում գործող ֆերմերներին ու գործարարներին առաջարկում ագրոապահովագրության նոր ծրագիր:

Նշենք, որ 2014 թվականի համար ծրագրի բյուջեում ներառված էր 5 միլիոն լարի եւ դրանում ներգրավված են ապահովագրական այն ընկերությունները, որոնց համար ագրոապահովագրությունն առաջնահերթային է: Ինչպես պարզաբանեց գյուղատնտեսության նախարար Օթար Դանելիան, ծրագիրը ղեկավարելու է նախագծերի կառավարման գործակալությունը եւ ծրագիրը գործարկվելու է սեպտեմբերի 1-ից: Պիլոտային կարգով այն կգործի մինչեւ 2015 թվականի սեպտեմբերի 1-ը: Ծրագրի շրջանակներում պետությունը կմարի ապահովագրական ծրարի ծախսերի 95 տոկոսը: «Պետության կողմից շարունակվում է աջակցության ցուցաբերումը գյուղատնտեսության ոլորտին: Դա այն քաղաքականության շարունակությունն է, որը սկսել է մեր կառավարությունը: Տվյալ պարագայում խոսքը վերաբերում է ագրոապահովագրության համակարգի ներդրմանը: Դա կլինի պիլոտային նախագիծ, որը նախատեսում է ագրոապահովագրության դեպքում որոշակի տոկոսի ֆինանսավորում: Համապատասխանաբար, ագրոապահովագրությունը տարածվում է բոլոր արտադրությունների վրա, եւ ֆինանսավորումը կիրականացվի 70-ից 90 տոկոսի շրջանակներում, իսկ որոշ դեպքերում՝ մինչեւ 95 տոկոսը»,- հայտարարեց Օթար Դանելիան:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

50 ՏՈԿՈՍ ՁԵՂՉ՝ ԱՆՁՆԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

Վրաստանի արդարադատության նախարարությունը ներդնում է նոր արտոնություններ, ըստ որի անձնական վկայականի՝ ID քարտի ստացման համար երկրում ներդրվում է զեղչ՝ 50 տոկոսի չափով: Օգոստոսի 20-ից մինչեւ սեպտեմբերի 20-ը Վրաստանի քաղաքացիները անձնական վկայականի համար կվճարեն 15 լարի:

Հիշեցնենք, որ, ներկա դրությամբ, անձնական վկայականի համար 30 լարի վճարելու դեպքում, այն տրվում էր աշխատանքային տասը օրվա ընթացքում: Արագացված կարգով 5 օրվա ընթացքում վկայականը ստանալու համար հարկ էր վճարել 40 լարի, մեկ օրում ստանալու համար՝ 65 լարի:

Նախարարության տվյալներով, նոր տիպի անձնական վկայականներ արդեն ստացել է 1,2 միլիոն քաղաքացի: Նոր վկայականը առավելագույնս պաշտպանված է կեղծումներից: Նոր փաստաթղթի օգնությամբ, մարդուն կարելի է նույնականացնել տարածության վրա, համացանցի միջոցով: Բացի այդ, նոր քարտը թույլ է տալիս էլեկտրոնային փաստաթղթերի վրա կատարել թվային ստորագրում, որը գործող օրենսդրության համաձայն, իրավաբանական ուժ ունի:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

ԱՆՑԿԱՑՎԵՑ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ

Օգոստոսի 13-ին Վրաստանի արդարադատության նախարարությունում անցկացվեց համերաշխության հիմնադրամի շնորհանդեսը:

Երկրի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանու, պաշտոնատար այլ անձանց ներկայությամբ անցկացված շնորհանդեսին՝ հիմնադրամի նպատակների եւ խնդիրների մասին ելույթ ունեցավ Վրաստանի կառավարության վարչակազմի փոխղեկավար Նինո Կոբախիձեն: Իր խոսքում, Թեա Ծուլուկիանին ընդգծեց վարչապետի նախաձեռնությամբ հիմնված համերաշխության հիմնադրամի նշանակությունը: Նրա խոսքերով, թեպետ նոր կառավարության օրոք անցկացվում են մասշտաբային բարեփոխումներ, սոցիալական պաշտպանության եւ առողջապահության հատվածում առկա է լրացուցիչ օգնության անհրաժեշտությունը:

Նրա խոսքերով, արդարադատության նախարարության աշխատակիցները, համերաշխության հիմնադրամ են փոխանցել 6 հազար լարի:

Նշենք, որ Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու նախաձեռնությամբ հիմնված համերաշխության հիմնադրամի նպատակն է՝ հասարակական, մասնավոր եւ պետական հատվածների մասնակցությամբ գործարկել սոցիալապես անպաշտպան եւ աղետալի ռիսկերի առջեւ հայտնված երեխաների ու ընտանիքների օգնության ֆինանսավորման մեխանիզմների հիմնումը: Հիմնադրամը գլխավորապես կողմնորոշված է թանկարժեք օնկոլոգիական, վիրահատությունների ֆինանսավորմանը:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ՎՐԱՍՏԱՆԸ ՉԻ ՄԻԱՆՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԵՄ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻՆ

Վրաստանը հրաժարվեց միանալ Ռուսաստանի դեմ սահմանած Արեւմուտքի պատժամիջոցներին:

Պարզաբանելով երկրի դիրքորոշումը, Ռուսաստանի հետ հարաբերությունների հարցով Վրաստանի վարչապետի հատուկ ներկայացուցիչ Զուրաբ Աբաշիձեն նշեց. «Եթե որեւէ մեկը նկատի ունի առեւտրատնտեսական հարաբերությունները եւ պատժամիջոցներին Վրաստանի միավորման հարցը, ապա հարկ է նշել, որ Ռուսաստանի հետ առեւտրական հարաբերությունների ծավալն այնքան աննշան է, որ դա իրականում կորցնում է հրատապությունը»,- հայտարարեց Աբաշիձեն:

Նրա խոսքերով, դեռեւս վեց տարի առաջ Վրաստանը խզել է դիվանագիտական հարաբերությունները Ռուսաստանի հետ, ինչը երկու երկրների միջեւ հարաբերությունների ամենախիստ տարբերակն է: Միաժամանակ Զուրաբ Աբաշիձեն շեշտեց, որ Թբիլիսին պաշտպանում է Կիեւի իշխանությունների գործողությունները: Նա հիշեցրեց, որ խորհրդարանը մի քանի բանաձեւ է ընդունել ի պաշտպանություն Ուկրաինայի, թեպետ «ներկա փուլում Վրաստանի կառավարությունը լրացուցիչ ոչինչ չի կարող անել»:



ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ ԱՖՂԱՆՍՏԱՆՈՒՄ

Վրաստանի պաշտպանության նախարար Իրակլի Ալասանիան, Աֆղանստան կատարած եռօրյա պաշտոնական այցի շրջանակներում, եղավ Կանդագարի ռազմաօդային բազայում, հանդիպում ունեցավ այդտեղ տեղակայված վրացական լեռնահետախուզական գումարտակի զինծառայողների հետ: Այցի շրջանակներում Վրաստանի պաշտպանության նախարարը հանդիպում ունեցավ նաեւ Աֆղանստանում ՆԱՏՕ-ի հրամանատարության ղեկավար, գեներալ Ջոզեֆ Դանֆորդի հետ: Կողմերը մանրամասն քննարկեցին միջազգային խաղաղարարական ուժերի գործունեության եւ այդ առաքելության շրջանակներում վրաց զինծառայողների ծառայությանն առնչվող հարցեր:

ՀՐԱՊԱՐԱԿՎԵՑ ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Վրաստանի պետական սպասարկումների զարգացման ազգային գործակալությունը հրապարակեց ընթացիկ տարվա անցած ժամանակահատվածում երկրի մասշտաբով ծննդաբերության վիճակագրությունը: Գործակալության տվյալներով, ընթացիկ տարվա հունվարի 1-ից մինչեւ օգոստոսի 1-ը Վրաստանում ծնվել է 34601 երեխա, որից 17860-ը տղա է, 15541-ը՝ աղջիկ: Նշենք, որ 2013 թվականին գրանցվել էր 57860 նորածին, 2012-ին՝ 58175, 2011-ին՝ 59381, 2010-ին՝ 63726, 2009-ին՝ 63806 եւ 2008-ին՝ 57976 նորածին:

ԳԻՈՐԳԻ ԱՄԱՇՈՒԿԵԼԻՆ՝ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների առաջին փոխնախարար Գիորգի Ամաշուկելին, Վրաստանի վարչապետի հրամանագրով, նշանակվել է մունիցիպալային զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն: Գիորգի Ամաշուկելին, որը վերջին երկու տարիներին զբաղեցնում է տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների փոխնախարարի պաշտոնը, մինչ այդ եղել է ավտոմոբիլային ճանապարհների դեպարտամենտի փոխնախագահ:

ՄԱՐԻԱՄՈԲԱՅԻ ԱՌԹԻՎ ՆԵՐՈՒՄ ՉԻ ԾՐԱԳՐՎՈՒՄ

Մարիամոբա տոնի առթիվ բանտարկյալներին ներում չի ծրագրվում: Ինչպես հայտարարեց ներման պետական հանձնաժողովի նախագահ Զվիադ Քորիձեն, նման որոշումն ընդունվել է այն կապակցությամբ, որ ընդամենը երեք շաբաթ առաջ ներման մասնաբային գործողություն է իրականացվել: Նրա խոսքերով, նման կարճ ժամանակահատվածում բանտարկյալների ազատ արձակումն արդարացված չէ եւ հանձնաժողովն էլ կարճ ժամանակահատվածում ի վիճակի չէ ուսումնասիրելու ներկայացված գործերը: Հիշեցնենք, որ հուլիսի վերջին պետական հանձնաժողովի առաջարկությամբ, երկրի նախագահը ներում շնորհեց 169 բանտարկյալի:

ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Վրաստանի արեւելյան մասի Խաշուրի շրջանում ջրով են ողողվել հարյուրավոր բնակելի տներ ու հազարավոր հեկտարներով գյուղատնտեսական հանդակներ, որտեղ տեւական տեղատարափ անձրեւները հանգեցրել են ափերից գետերի դուրս գալուն: Հեղեղման հետեւանքով մարդկային զոհեր չկան, սակայն տարածաշրջանին զգալի նյութական վնաս է հասցվել: Տարերային աղետի հետեւանքների վերացման համար ստեղծված է հատուկ հանձնախումբ, որն արդեն ձեռնամուխ է եղել վնասված օբյեկտների վերականգնմանը եւ տեղացի տուժած բնակիչներին օգնության ցուցաբերմանը:

ԲԱՐԵՓՈԽՈՒՄ

ՆՈՐ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ

Վրաստանի հարկային օրենսգրքում հերթական փոփոխություններ են կատարվում:

Ինչպես հայտարարեց Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրին, իր գլխավորած գերատեսչությունը շարունակում է աշխատել օրենսդրական նոր նախաձեռնության շուրջ, որն ուղղված է տուգանքների եւ պատժամիջոցների ազատականացման ներդրմամբ արդարացի եւ արդյունավետ վարչական իրավական բազայի ստեղծման անհրաժեշտությանը: «Օրենսգրքում կկատարվեն հետեւյալ փոփոխությունները: Ներքին սպառման համար մթերքի վերամշակման սպասարկումը կազատվի ՀԱՀ-ից (Հավելյալ արժեքի հարկ): Առանձին դեպքերում, օտարերկրացիները ներկրում են հումք, նյութեր, վրաց արդյունաբերությունում իրականացվում է այդ հումքի եւ նյութերի վերամշակումը, որը հետագայում արտահանվում է: Ցանկացած արտահանում Վրաստանում ազատված է ՀԱՀ-ից, թեպետ վերոնշյալ սպասարկումները այդ հարկից ազատված չեն: Հարցի կարգավորորումը թույլ կտա խրախուսել արտադրությունների գործունեությունը, ուստի ներկայացրել ենք վերոնշյալ նախաձեռնությունը»,- հայտարարեց Խադուրին:

Նրա խոսքերով, փոփոխություններից մեկը վերաբերում է զբոսաշրջական ձեռնարկությունների համար հարկային պարտավորության կատարման մեխանիզմների դյուրացմանը: «Վրաստանի հանգստավայրերում զարգացում է ապրում զբոսաշրջիկության օբյեկտների շինարարությունը, որից հետո իրականացվում է դրա վաճառքը: Միաժամանակ, դրա սեփականատերերին տրված է այն վարձով հանձնելու իրավունք: Ներկայումս նախատեսում ենք սահմանել արտոնություններ, նվազեցնել վարչարարության մակարդակը»,- նշեց Խադուրին:

ՔՆՆԱՐԿՎԵՑ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱՐԸ

Օգոստոսի 13-ին Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրին հանդիպում ունեցավ երկրի բիզնես-ասոցիացիայի ղեկավարների հետ:

Հանդիպման նպատակը ֆինանսների նախարարության նախաձեռնած եւ երկրի կառավարության կողմից հաստատված հարկային օրենսգրքի փոփոխությունների քննարկումն էր, փոփոխություններ, որոնց նպատակն է ուժեղացնել երկրի զբոսաշրջության ներուժը, մրցակցային միջավայրի ստեղծումը, գործարարության աջակցությունը, տեղական արտադրության խրախուսումը:

Առանձնակի ուշադրություն հատկացվեց հյուրանոցային գործարարության զարգացման հարցերին: Քննարկվեցին նաեւ գործարարների համար սահմանված արտոնությունների, գանձարկղային սարքերի օգտագործման կանոնների խախտման համար մինչեւ 2014 թվականի հունվարի 1-ը սահմանված տուգանքների վերացման եւ մինչեւ 5 հազար լարիի պարտքի վճարումը մեկ տարով երկարաձգելու մասին հարցերը: Ներկայացված փոփոխություններն առնչվում են նաեւ մինչեւ 2005 թվականի հունվարի 1-ը ծագած հարկային պարտքերի եւ մինչեւ 2009 թվականի հունվարի 1-ը հարկային պարտքերի համար սահմանված տուգանքների վերացմանը:

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

ԿԱՐՏՈՖԻԼԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ. ԻՆՉ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՐՈՂ Է ՑՈՒՑԱԲԵՐԵԼ ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆԻՆ

ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻԻ ՖԵՐՄԵՐՆԵՐԸ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՄԲ ԿԻՐԱՌՈՒՄ ԵՆ ԿԱՐՏՈՖԻԼԻ ԱՃԵՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Եվրամիության հետ ասոցիացման համաձայնագիրը, որը ներառում է նաեւ ազատ առեւտրի պայմանագիրը, ստորագրող կողմերի համար նախատեսում է նաեւ մի շարք պարտավորություններ: Մասնավորապես խոսքը վերաբերում է արտահանվող եւ ներկրվող արտադրանքի (արդյունաբերական եւ գյուղատնտեսական ապրանքներ) որոշակի չափորոշիչների պահպանմանը: Ներկա պայմաններում, կոնկրետ մեր հարցում, առավել նշանակալից են գյուղմթերքների համար սահմանվող չափորոշիչները, քանզի տվյալ պարագայում այն կազմում է Վրաստանից արտահանվող արտադրանքի առյուծի բաժինը:

Ստորեւ ներկայացված հարցազրույցում մենք փորձեցինք առավել մանրամասնորեն ներկայացնել, կոնկրետ, Սամցխե-Ջավախեթիի եւ Քվեմո Քարթլիի տարածաշրջանների բնակչության համար առավել եկամտաբեր գյուղմթերքի՝ կարտոֆիլի արտադրության եւ արտահանման հարցում Եվրամիության հետ ասոցիացման համաձայնագրի դրական եւ բացասական կողմերը:

Կարտոֆիլը այն մթերքներից է, որի ֆիտոսանիտարական վերահսկողությունը՝ ինչպես սահմանագծում, այնպես էլ ներքին շուկայում կտրուկ խստացվեց: Ինչպիսի՞ն է կարտոֆիլի ներքին շուկան, ինչպիսի՞ն են Եվրամիության երկրներ այդ մթերքի արտահանման հեռանկարները եւ ի՞նչ փոփոխություններ կատարվեցին այդ հարցում Եվրամիության հետ ասոցիացման համաձայնագրի ստորագրումից հետո:

Այս եւ մյուս հարցերին պատասխանում է գյուղատնտեսական հարցերով փորձագետ Նինո Նատրոշվիլին:

- Տիկին Նինո, նախ պարզենք, թե ընդհանուր առմամբ ի՞նչ քայլեր են ձեռնարկվում մեր արտադրանքը եվրոպական չափորոշիչներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

- Ասեմ, որ Եվրամիությունը Վրաստանի պարենի պիտանիության գործակալությանը երկամյա գրանտի տեսքով հատկացրել է 4,5 միլիոն եվրո: Գրանտի նպատակն է Վրաստանում ապահովել Եվրամիության չափորոշիչներին եւ օրենսդրությանը համապատասխանող մթերքի արտադրությունը, անասնաբուժական, սանիտարական եւ ֆիտոսանիտարական վերաստուգման կառավարման համակարգերի ներդրում: Հիշեցնեմ, որ ստորագրելով ասոցիացման համաձայնագիրը, Վրաստանն ստանձնել է իր օրենսդրությունը Եվրամիության օրենսդրությանը համապատասխանեցնելու պարտավորություն: Դրանում ներառված է նաեւ պարենամթերքի նկատմամբ վերահսկողության հարցը: Կարտոֆիլը հենց այն սննդամթերքի տարատեսակներից մեկն է, որի ֆիտոսանիտարական վերահսկողության խստացումը Վրաստանն ստանձնել էր դեռեւս 2007 թվականին:

- Ասոցիացման համաձայնագիրը նախատեսում է նաեւ ազատ առեւտրի սահմանում, ինչն, իր հերթին նախատեսում է որոշակի սահմանափակումներ՝ այս կամ այն մթերքի հարցում: Որքանո՞վ է դա առնչվում կարտոֆիլին: Ի՞նչ կասեիք այդ մասին:

- Եվրամիությունը, Վրաստանի հետ առեւտրական համաձայնագրի շրջանակներում, կարտոֆիլի արտահանման սահմանափակում չի սահմանել: Թեպետ տեղի ֆերմերները դեռեւս չեն կարողանա Եվրամիության շուկա դուրս բերել իրենց արտադրանքը, քանի որ եվրոչափանիշներին համապատասխանեցնելու համար կպահանջվի որոշակի ժամանակ:

Արտահանման ցանկություն ունեցող ֆերմերները պետք է իրականացնեն հատուկ գրանցումներ, թե ինչ թունաքիմիկատներ են օգտագործել վեգետացման փուլում: Պետք է ուսումնասիրվի հողատարածքը, որտեղ աճեցվելու է կարտոֆիլը: Հստակեցվելու են նաեւ հնարավոր հիվանդությունների եւ վնասատուների դեմ պայքարի մեթոդները: Բացի այդ, Եվրամիության շուկայում գործում է չափի չափորոշիչը, այսինք՝ ինչ մեծության կարտոֆիլ կարելի է արտահանել եվրոպական շուկա:

Թեպետ, ի պատիվ, օրինակ, Սամցխե-Ջավախեթիի ֆերմերների, պետք է ասեմ, որ, չնայած եվրոպական շուկա ներթափանցելու դժվարություններին, այստեղ արդեն ձեռնամուխ են եղել եվրոպական տեխնոլոգիաների ներդրմանը եւ մշակել են կարտոֆիլի աճեցման նոր մեթոդներ:

Օրինակ, տարածաշրջանի տնտեսություններում ներդրել են Եվրոպայում արդյունավետ փորձարկում անցած կաթիլային ոռոգման համակարգը, ինչը թույլ է տալիս ջրի խնայողական օգտագործմամբ ստանալ բարձր բերք: Ոռոգման այդ համակարգի մոնտաժման արժեքը մեկ հեկտար հողատարածքի վրա կազմում է 3-4 հազար լարի: Թեպետ դրա օգտագործման դեպքում 1 կիլոգրամ կարտոֆիլի ինքնարժեքը կազմում է 35-40 թեթրի: Նման դեպքերում հողերն ապահովված են լինում երաշտից: Փորձերը ցույց են տվել, որ ոռոգման վերոնշյալ համակարգի օգտագործման դեպքում, 7-10 հեկտարի վրա աճեցվել էր 22-25 տոննա բերք, այն դեպքում, երբ սովորական ոռոգման պայմաններում նույն հողատարածքի բերքատվությունը կազմել էր 10-11 տոննա:

- Որքանո՞վ է հավանական եվրոպական շուկայում մեր կողմից կարտոֆիլի արտահանման հնարավորությունը: Չէ՞ որ այնտեղ ուժեղ մրցակցություն է:

- Իրոք, մրցակցությունն ուժեղ է: Եվրամիության շուկայում կարտոֆիլի հիմնական մատակարարները Իսպանիան, Իտալիան եւ Լեհաստանն են: 2014 թվականի տվյալներով, Եվրամիության երկրների շուկաներում կարտոֆիլը ամենաէժանը Լեհաստանում էր՝ կիլոգրամի դիմաց 0,58 եվրո, իսկ ամենաթանկը Բելգիայում՝ 2,2 եվրո:

Ամենայն հավանականությամբ, եվրոպական չափորոշիչներին Վրաստանում աճեցրած կարտոֆիլի համապատասխանեցման դեպքում, եվրոպական շուկա մուտք գործելու ամենահավանական հնարավորությունը կունենա վաղահաս կարտոֆիլը: Ինչպես գիտեք, վաղահաս կարտոֆիլը մեր տարածքներում հասունանում է մայիսի վերջին-հունիսի առաջին տասնօրյակում: Եվրոպական շուկայում վաղահաս կարտոֆիլի արտահանման հնարավորությունն իրատեսական է, քանզի հիմնական մատակարարող երկրներում վաղահաս կարտոֆիլը ստացվում է շատ ավելի ուշ: Ինչ վերաբերում է ուշահաս կարտոֆիլին, ապա այստեղ հարկ կլինի մթերքի ներկայացման առումով որոշակի աշխատանք կատարել, գովազդել, դրան նվիրված միջոցառումներ կազմակերպել եւ այլն:

- Իսկ ի՞նչ կասեիք կարտոֆիլի ներքին շուկայի մասին:

- Ինչ վերաբերում է կարտոֆիլի ներքին շուկային, ապա, 2014 թվականի հունիսի տվյալներով, մեկ կիլոգրամ կարտոֆիլի մեծածախ գինը կազմում էր 45-50 թեթրի, իսկ փոքրածախը՝ 0,6-1 լարի:

Նշեմ, որ 2013 թվականի աշնանն ու ձմռանը տեղական շուկայում կարտոֆիլի գինը կտրուկ աճեց, հասավ 1,6-2 լարիի: Ֆերմերների պարզաբանմամբ, կարտոֆիլի գնի ավելացումը պայմանավորված էր արտահանման ծավալների մեծացման հետ: 2013 թվականին երկրի մասշտաբով Վրաստանում իրացվել է 296 600 տոննա կարտոֆիլ, արտահանվել՝ 16 630 080 տոննա:

Վրաստան կարտոֆիլի ներկրման հարցով լիդերը Հայաստանն է, այն անցյալ տարի ներկրել է 13 205 600 տոննա կարտոֆիլ: Այդ ցուցակում երկրորդ տեղը զբաղեցնում է Եգիպտոսը, որտեղից ստացվել է 1 673 600 տոննա կարտոֆիլ, երրորդը՝ Նիդերլանդները՝ 925 300 տոննա:

Ներկրման ծավալների նման ավելացումը առաջացրեց ֆիտոսանիտարական վերահսկողության խստացման անհրաժեշտություն: Դրա շնորհիվ էր, որ անցյալ տարի խոտանվեց եւ ետ ուղարկվեց 924 565 տոննա կարտոֆիլ: Նշենք, որ կարտոֆիլի գնի վրա որոշակի ազդեցություն գործեց նաեւ այն, որ տեղական արտադրողները չկարողացան բավարարել ներքին շուկայի պահանջարկը:

Թեպետ հարկ է նշել, որ 2013 թվականի կարտոֆիլի բարձր գինը որոշակիորեն խրախուսեց ֆերմերներին, ինչը հանգեցրեց կարտոֆիլի ցանքատարածքների ավելացմանը: Օրինակ, 2014 թվականին Բոլնիսիի մունիցիպալիտետում վաղահաս կարտոֆիլ տնկարկվեց ավելի քան 2 հազար հեկտար տարածքի վրա:

Տեղաշարժեր են նկատվել նաեւ Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանում: Օրինակ, 2014 թվականի համար Ախալքալաքիի մունիցիպալիտետում կարտոֆիլի տակ դրվեց 7100 հեկտար տարածք: Անցյալ տարի ախալքալաքցիներն էլ իրենց կարտոֆիլը ծախեցին բավականին բարձր գներով: Գնորդները մթերքը տանում էին անմիջականորեն գյուղերից: Հավանաբար, դա յուրատեսակ ազդակ հանդիսացավ ֆերմերների համար: Բավական է նշել, որ ախալքալաքցի ֆերմերներն ընթացիկ տարվա համար գնել էին շուրջ 400 տոննա կարտոֆիլի սերմնանյութ:

Ինչպես տեսնում ենք, Եվրամիության շուկա մուտք գործելու հեռանկարներն իրատեսական են, թեպետ հարցի վերջնական լուծման ոչ միայն բավականին ժամանակ, այլեւ նշանակալի ծավալի աշխատանք ու միջոցներ պետք է հատկացվեն:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ